

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2013 թվականի հունվարի 10-ի թիվ 13-Ն որոշման
մեջ փոփոխություններ և լրացում կատարելու
մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N _____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 13-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «**Ոստիկանությունում ծառայության անցնելու համար առանձին մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված առավելագույն տարիքային սահմանափակումները սահմանելու մասին**» N 13-Ն որոշման հավելվածում (այսուհետ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

- հավելվածի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,
- հավելվածի 6-րդ կետում՝

ա. Ռադիոտեխնիկա և կապ, բառերից հետո հանել ինֆորմատիկա (համակարգչային գիտություն), բառերը, ինչպես նաև և նյութերի մշակում բառերը,

բ. Ֆինանսներ բառից հետո լրացնել տնտեսագիտություն, կառավարում, բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

«____»

_____ 2020թ.

Երևան